# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՎԵՐ

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ. ՀԵՏԱՀԱՅԱՑ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Գիտաժողովի օրերը՝ 16-18 սեպտեմբերի 2021 թ.
Գիտաժողովի վայրը՝ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ,
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նիստերի դահլիճ,
Երևանի պետական համալսարան,
Մատենադարան

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և նրան դաշնակցած Թուրքիայի սանձազերծած պատերազմը և դրա արդյունքում նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի միջև ստորագրված հայտարարության տեքստը բացասական լուրջ հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար՝ Արցախի Հանրապետությունը կրեց խոշոր տարածքային կորուստներ, արցախահայության զգալի հատվածը զրկվեց իր հայրենիքում ապրելու հնարավորությունից՝ դառնալով փախստական:

Արցախյան երկրորդ պատերազմում Թուրքիայի գործուն մասնակցությունը, այդ պետության կողմից հետապնդած պանթուրքիստական նպատակները թույլ են տալիս տեղի ունեցածը դիտարկել որպես հայ ժողովրդի մասնիկներից մեկի՝ Արցախի հայության նկատմամբ ցեղասպան և հայրենազրկման քաղաքականության նոր դրսևորում, ինչը իրավաչափ է դարձնում նաև ադրբեջանահայության և արցախահայության նկատմամբ ադրբեջանական իշխանությունների ցեղասպան քաղաքականության պատմության գիտական արծարծումը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների ծիրում:

Ստեղծված նոր իրողությունները նաև արդիական են դարձնում Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության գիտական ասպեկտին առնչվող նոր խնդիրների և մարտահրավերների քննարկումը, ուսումնասիրության նոր ուղղությունների և ոլորտների սահմանումն ու ներկայացումը, Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործընթացի հեռանկարների քննարկումը:

Վերոնշյալ նպատակին է ուղղված **«Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ»** խորագրով գիտաժողովի կազմակերպումը:

Գիտաժողովին ներկայացվելիք զեկուցումները պետք է վերաբերեն (սակայն չսահմանափակվեն) հետևյալ թեմաներին.

1. Հայոց ցեղասպանության ուսումնասիրության խնդիրները 21-րդ դարում. պրոբլեմային դաշտի նշագծում
2. Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության խնդիրներ. վերարժևորումներ և նոր բացահայտումներ (նոր արխիվային տվյալներ, մամուլ, հուշագրություններ, գեղարվեստական գրականություն)
3. Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը միջգիտակարգային տիրույթում (հոգեբանություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, մշակութաբանություն, ազգագրություն, կրոնագիտություն, արվեստաբանություն և այլն)
4. Ցեղասպանության հիշողության փոխանցման մեխանիզմները 20-21-րդ դարերում և Հայոց ցեղասպանության դասավանդման խնդիրները
5. Թվային տեխնոլոգիաները և Հայոց ցեղասպանագիտության ապագան
6. Հայոց հայրենազրկումը ամրագրող միջազգային պայմանագրեր. պատմաիրավական գնահատական
7. Հայոց ցեղասպանության ժխտումը և հայատյացությունը Թուրքիայի քաղաքականության ծիրում
8. Ադրբեջանական իշխանությունների հայատյացության և ցեղասպան քաղաքականությունը ադրբեջանահայության և արցախահայության նկատմամբ

Գիտաժողովի շրջանակներում կազմակերպվելու են հետևյալ երկու կլոր սեղան-քննարկումները.

– Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործընթաց. ձեռքբերումներ, խնդիրներ, սպասելիքներ,
– Ցեղասպանության քաղաքականության դրսևորումները երկրորդ արցախյան պատերազմի ժամանակ:

Գիտաժողովը բաց է հետազոտողների լայն շրջանակի համար:

Գիտաժողովի հայտերը պետք է ներկայացնել մինչև **2021 թ. հունիսի 15-ը**: Ընտրված մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի 2021 թ. հունիսի 30-ին: Ներկայացվող հայտերը պետք է ընդգրկեն ամփոփում՝ 200-250 բառ, և հեղինակի համառոտ գիտական ինքնակենսագրությունը (CV):

Դիմումները պետք է ուղարկվեն կազմակերպչական հանձնաժողովին հետևյալ էլ. հասցեով՝ genocide.artsakh@genocide-museum.am :

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը և անգլերենը:

Գիտաժողովն առանց մասնակցության վճարի է:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

| | |
|---|---|
| Աշոտ Մելքոնյան | Կազմկոմիտեի համանախագահ,<br>ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,<br>ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն |
| Հարություն Մարության | Կազմկոմիտեի համանախագահ,<br>«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն |
| Յու. Սուվարյան | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,<br>ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար |
| Ռուբեն Սաֆրաստյան | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,<br>ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական ղեկավար |
| Գևորգ Պողոսյան | ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,<br>ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական ղեկավար |
| Արարատ Աղասյան | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,<br>ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն |
| Պավել Ավետիսյան | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,<br>ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն |
| Վարդան Դևրիկյան | ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն |
| Ավետիք Իսահակյան | ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրեն |
| Արամ Սիմոնյան | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,<br>ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն |
| Էդիկ Մինասյան | ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան |
| Պետրոս Տէր Մաթոսեան | ԱՄՆ Նեբրասկայի համալսարանի Լինքոլնի մասնաճյուղի դասախոս,<br>«Հայագիտական ուսմանց ընկերակցության» ատենապետ |
| Ռայմոնդ-Յարութիւն Գէորգեան | Ֆրանսիայի Ռուանդայի ազգային հետազոտական հանձնաժողովի անդամ,<br>ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ,<br>«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ |

## International Conference Invitation

## "At the Crossroads of the Armenian Genocide, Armenian Claims and the Artsakh Issue – Retrospective Assessments and Prospects"

Date: September 16-18, 2021

Venues: Conference hall of the Presidium of National Academy of Sciences of Armenia
Armenian Genocide Museum-Institute conference hall
Yerevan State University
Matenadaran

The war unleashed by Azerbaijan and its ally Turkey on September 27, 2020 against the Republic of Artsakh and the following agreement between Azerbaijan, Armenia and Russia on November 9, had serious negative consequences for the Armenians: The Republic of Artsakh had great territorial losses, a significant number of the Armenians of Artsakh were deprived of the opportunity to live in their homeland and have become refugees.

The active part played in the Second Artsakh War by Turkey and the ideas of Pan-Turkism pursued by that country allow us to consider what happened to the Armenians of Artsakh - a small part of the whole Armenian people - as a new manifestation of its policy of genocide and deprivation of fatherland. This makes it legitimate to scientifically discuss the history of the Azerbaijani government's genocidal policy towards the Armenians of Azerbaijan and Artsakh in the context of the Armenian Question and the Armenian Genocide itself.

These new realities also make discussion of new problems and challenges, related to scientific aspects of the study of the history of the Armenian Genocide, the definition and presentation of new areas and aspects of study and discussion of the prospect of Armenian Genocide recognition and compensation, a matter of urgency.

The conference "At the Crossroads of the Armenian Genocide, Armenian Claims and the Artsakh Issue – Retrospective Assessments and Prospects" aims at this goal.

The reports submitted for the conference should relate (but are not limited) to the following topics:

1. The problems of studying the Armenian Genocide in the 21st century: marking the problem areas;
2. The problems of source studies of the Armenian Genocide: re-evaluations and new discoveries (new archival data, press, memoirs, fiction);
3. The study of the Armenian Genocide in the interdisciplinary domain (Psychology, Sociology, Economics, Political science, Cultural Studies, Ethnography, Religious Studies, Art history);
4. Methods to be used to ensure transmission of Genocide memory in the 20th and 21st centuries and problems associated with teaching the subject of genocide;
5. Digital technologies and the future of the Armenian Genocide studies;

6. International agreements related to the deprivation of Armenian fatherland: an historical-legal assessment;
7. The denial of the Armenian Genocide – the hatred against Armenians in Turkish politics;
8. The policy of hatred and genocide conducted by the Azerbaijani government against the Armenians of Azerbaijan and those of Artsakh.

Two round-table discussions will be organised within the framework of this conference:

1. Recognition and compensation processes of the Armenian Genocide: achievements, problems, expectations;
2. Genocide policy manifestations seen during the Second Artsakh War.

The conference is open to a wide range of researchers.

Applications for participation in the conference must be submitted by June 15, 2021. Details of the accepted participants will be published on June 30, 2021. All applications must include an abstract of 200-250 words, accompanied by the author's brief CV.

Applications are to be sent to this e-mail address: genocide.artsakh@genocide-museum.am.

The working languages of the conference are Armenian and English.

Conference entry is free of charge.

CONFERENCE ORGANISING COMMITTEE

| | |
|---|---|
| Asho Melkonyant | Organising Committee Co-Chair<br>Academician of the NAS RA<br>Director of the Institute of History, NAS RA |
| Harutyun Marutyan | Organising Committee Co-Chair<br>Director of the Armenian Genocide Museum-Institute Foundation |
| Yuri Suvaryan | Academician of the NAS RA<br>Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS RA |
| Ruben Safrastyan | Academician of the NAS RA<br>Scientific director of the Institute of Oriental Studies, NAS RA |
| Gevorg Poghosyan | Academician of the NAS RA<br>Scientific director of the Institute of Philosophy, Sociology and Law, NAS RA |
| Ararat Aghasyan | Corresponding member of the NAS RA<br>Director of the Institute of Arts, NAS RA |
| Pavel Avetisyan | Corresponding member of the NAS RA<br>Director of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA |
| Vardan Devrikyan | Director of the Manuk Abeghyan Institute of Literature, NAS RA |
| Avetik Isahakyan | Acting Director of the All-Armenian Foundation Financing Armenological Studies, NAS RA |

| | |
|---|---|
| Aram Simonyan | Corresponding member of the NAS RA<br>Director of the Institute for Armenian Studies, Yerevan State University |
| Edik Minasyan | Dean of the Faculty of History, Yerevan State University |
| Bedros Der-Matossian | Associate Professor at the University of Nebraska-Lincoln, USA<br>President of the Society for Armenian Studies (SAS) |
| Harutyun Raymond Kevorkian | Member of the National Research Commission on Rwanda, France<br>Foreign member of NAS RA<br>Chairman of the Board of Trustees of the Armenian Genocide Museum-Institute Foundation |